

ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔ
ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Սույն թվականի հոկտեմբերի 26—31 օրերին Իտալիայի Ասիզի քաղաքում անցկացվեց խաղաղության համատեղ աղոթք՝ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապի նախաձեռնությամբ:

Համատեղ աղոթքին հրավիրված էին աշխարհի բազմաթիվ կրոնների և քրիստոնեական քույր Եկեղեցիների ներկայացուցիչները: Համատեղ աղոթքին, հանուն Հայաստանյայց Առաքելական Ուղղափառ Եկեղեցու, մասնակցեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպ. Պոլսպալյանը՝ իրեն ուղեկից ունենալով Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Սարգիս քհն. Սարգիսյանին:

Հոկտեմբերի 27-ին Ս. Մարիա Դեյլի Անջելի տաճարում բահայ, բուդիստ, հինդու, մուսիսական, մուսուլման, շինդո, սիկխ, կրադաշտական, անիմիստ և ամերիկյան հնդկական կրոնների ներկայացուցիչներին և քրիստոնեական քույր Եկեղեցիների պատգամավորներին ողջունեց Սրբազան Պապը:

Նույն օրը Ս. Ռուֆինո Մայր եկեղեցում և Ս. Ֆրանչիսկոսի հրապարակում լսվեց բոլոր կրոնների ու ժողովուրդների աղոթքի ձայնը, ողջագուրվեցին բազմազգի և այլակրոն ներկաները՝ այն գիտակցությամբ և հույսով, որ համամարդկային եղբայրական կապերով կսկսվի խաղաղ և բարօր կյանքի մի նոր շրջան համայն աշխարհում, կվերանան միջուկային, լազերային և ամեն տեսակի մահաբեր զենքերը, աշխարհի ողջ մարդկությունը կապրի հաշտ և համերաշխ կյանքով: Կոչ արվեց ուժերը միավորել՝ հասնելու ընդհանուր զինաթափման. «Խաղաղության այսքան հրամայականը, որ այժմ դրված է յուրաքանչյուր գիտակից մարդու առջև, առավել կարևոր է և գերիվեր մեր կրոնական տարբերություններից: Դա բոլորի համար ընդունելի կյանքի՝ մարդկության գոյության համար պայքարի, լինել-չլինելու հարց է»,—եզրակացրեց Սրբազան Պապը:

Այս եզրակացությունը շատ համահունչ է սույն թվականի հոկտեմբերի 11-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի ԱՊՆ-ի թղթակցի «Ի՞նչ է աշխարհի քրիստոնյաների դերը՝ կանխելու ատոմային պատերազմը» հարցին տված պատասխանին.

«Սպասելի է և անհրաժեշտ, որ աշխարհի բոլոր կրոնական կազմակերպությունները, հատկապես Քրիստոսի անունով գործող Եկեղեցիները, հավատարիմ Ս. Ավետարանի պատգամներին, իրենց սեպուհ պարտքը նկատեն աղոթել և մշտապես գործել խաղաղասիրության, մարդասիրական գաղափարի հաղթանակի և ընդհանուր զինաթափման իրականացման համար, այն համոզմամբ, որ խաղաղության ճանապարհով հնարավոր պիտի լինի իրագործումը արդարության, ազատության և համամարդկային եղբայրության իդեալների»:

ԹՂԹԱԿԻՑ